

### 1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

#### 1.4.1.Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2004թ. հունվար-օգոստոսին, ըստ գնահատման, կազմել է 1233.4 հազ. մարդ, որի 90.5%-ը կամ 1116.3 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.5%-ը կամ 117.1 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2004թ. օգոստոսի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 147.7 հազ. աշխատանք փնտրողներից 97.6%-ը կամ 144.1 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 78.6%-ը կամ 113.3 հազ. մարդ: Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 5.4 հազ.մարդ, նրանցից՝ կանայք՝ 52.8%:

2004թ. օգոստոս ամսին «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում գրանցված 0.8 հազ. չզբաղվածներից 0.5 հազարը կամ 62.5%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 1.8 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.7 հազարը կամ 38.9%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության միջնորդությամբ նախկինում աշխատանք փնտրող 657 աշխատանքի տեղավորվածներից 45.5%-ը եղել են կանայք:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի<sup>1</sup>, 2004թ. օգոստոսի վերջին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից՝ չզբաղվածներ		Նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2003թ. օգոստոսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. օգոստոսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. օգոստոսի նկատմամբ, %
ք.Երևան	31.5	88.5	31.2	88.4	27.3	86.1
Արագածոտն	2.5	108.7	2.0	95.2	1.4	93.3
Արարատ	5.3	93.0	5.1	92.7	3.8	88.4
Արմավիր	8.4	100.0	8.2	97.6	5.3	94.6
Գեղարքունիք	8.5	97.7	8.0	93.0	5.4	85.7
Լոռի	27.9	103.7	27.6	103.4	21.9	100.5
Կոտայք	7.6	89.4	7.5	89.3	5.2	83.9
Շիրակ	31.7	97.8	31.0	96.0	24.8	92.5
Սյունիք	16.3	96.4	16.1	95.8	13.1	94.2
Վայոց ձոր	2.4	114.3	2.3	109.5	1.7	106.3
Տավուշ	5.6	105.7	5.1	104.1	3.4	97.1
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>147.7</b>	<b>96.7</b>	<b>144.1</b>	<b>95.4</b>	<b>113.3</b>	<b>92.0</b>

Պաշտոնապես գրանցված գործազուրկներից՝ 79.0 հազ. մարդ կամ 69.8%-ը կազմել են կանայք: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2003թ. օգոստոսի նկատմամբ աճել է 1.6%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

պահանջարկը 2004թ. օգոստոսի վերջին կազմել է 661 մարդ, այդ թվում՝ 73.1%-ը կամ 483-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

**Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների, 2004թ. օգոստոսին<sup>1</sup>**

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	այդ թվում՝ ամսվա վերջի դրությամբ
<b>Ազատ աշխատատեղեր</b>	968	661
<b>Ծառայողներ, ընդամենը</b>	217	178
<i>Նրանցից՝</i>		
տնտեսագետ	22	19
ինժեներ	2	1
բժիշկ	30	30
մանկավարժ	31	25
իրավաբան	10	9
գյուղատնտես	-	-
այլ մասնագետներ	122	94
<b>Բանվորներ, ընդամենը</b>	751	483
<i>Նրանցից՝</i>		
խառատ	6	4
փականագործ	26	15
մեխանիկ	-	-
էլեկտրիկ	8	3
ատաղձագործ	4	2
վարորդ	36	28
եռակցող	38	34
կոշկագործ	-	-
կարող, մանող, գործող, ջուլիակ	65	54
բանվորական այլ մասնագիտություններ	320	179
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	248	164

**Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների<sup>1</sup>, 2004թ.**

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Չգբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով		
		մարդ	Նախորդ ամսվա նկատմամբ, %	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	691	212	106.5	109.3
Փետրվար	621	238	112.3	127.3
Մարտ	661	224	94.1	117.9
Ապրիլ	701	210	93.8	143.8
Մայիս	664	220	104.8	131.7
Հունիս	701	208	94.5	112.4
Հուլիս	662	219	105.3	115.3
Օգոստոս	661	218	99.5	104.3

**Գործազրկության նպաստի և դրամական օգնություն միջին չափն ըստ 2004թ. ամիսների<sup>1</sup>**

(ամսվա վերջի դրությամբ)

	Նպաստառու գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ	Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ	Դրամական օգնություն ստացողների թվաքանակը, հազ. մարդ	Դրամական օգնության միջին չափը, դրամ
Հունվար	5.4	3503	8.0	1507
Փետրվար	5.9	3154	7.7	1427

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

Մարտ	6.2	3267	10.1	1409
Ապրիլ	6.2	3236	12.4	1427
Մայիս	6.1	3276	12.1	1440
Հունիս	5.9	3351	14.6	1464
Հուլիս	5.7	3479	15.0	1499
Օգոստոս	5.4	3524	12.4	1508

**Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ըստ ամիսների<sup>1</sup>**

*(ամսվա միջինը, գնահատական)*

	Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը, %	
	2003թ.	2004թ.
Հունվար	10.4	9.8
Փետրվար	10.4	9.8
Մարտ	10.5	9.8
Ապրիլ	10.2	9.5
Մայիս	10.2	9.4
Հունիս	10.1	9.3
Հուլիս	10.0	9.2
Օգոստոս	9.9	9.1

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով: